ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԷԱՃԾՁԲ-7/1-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 26 -ը հուլիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության կոնսորցիումի պայմանագիր «Գոհարիկ» ՍՊԸ հետ/՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ.Կարապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.02.2019թ. կնքված № ԷԱՃԾՁԲ-7/1-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **26 792 (քսանվեց հազար յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրը ուժի մեջ մտնելը՝ 2021թ. հունվարի 1-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1.2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Հրանտ Կարապետյան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք.Վարդենիս, Վ, Համբարձումյանի փ,, 3-րդ նրբ., տ. 4
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16037102874900
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 08804291
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
№ ԷԱՃԾՁԲ-7/1-3 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակի և եռամսյակների 2021թ.
						1-ին կիսամյակ
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Վարդենիսի տարածաշրջան)	կգ	157.6	170	26792	157.6

Հավելված N 2
№ ԷԱՃԾՁԲ-7/1-3 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	*Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.	
		3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Վարդենիսի տարածաշրջան	26792	26792

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/3

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Հրանտ Կարապետյան» ՍՊԸ
ք,Վարդենիս, Վ, Համբարձումյանի փ,, 3-րդ նրբ., տ, 4
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16037102874900
ՀՎՀՀ 08804291
Տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ